ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք,

ՀՀ Լոռու մարզ , ք. Թումանյան, Կենտրոնական փ., շ.1, Հեռ.
(098)048046 , tumanyan.lori@mta.gov.am

N 71
30 ապրիլ 2015թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի, պարոն մարզպետ

Կից ներկայացնում ենք Թումանյան համայնքի ավագանու 2015թ. ապրիլի 29-ի թիվ 11-Ա, 12-Ա և 13-Ա որոշումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ**

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ռ. Շահվերդյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ԱՊՐԻԼԻ 2015թվականի N 11-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասով և <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետով.

Ընդունել՝ ի գիտություն Թումանյան համայնքի 2015թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման մասին հաղորդումը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՆԵՐՍԵՍ
2. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ
3. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐԱՏ
4. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐՏՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

Հավելված
Թումանյան համայնքի ավագանու
2015թ.-ի ապրիլի 29-ի թիվ 11 - Ա որոշման

ՀԱՂՈՐԴՈՒՄ

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Թումանյան համայնքի 2015թ. –ի բյուջեն առաջին եռամսյակի ընթացքում կատարվել է եկամուտների գծով՝ 99.7 %-ով, նախատեսված 8690.0 հազ.դրամի փոխարեն փաստացի մուտքերը կազմել են 8666.1 հազ. դրամ: Սեփական եկամուտները (հարկային եկամուտներ և տուրքեր, ոչ հարկային եկամուտներ, եկամուտներ կապիտալ գործառնություններից) 786.5 հազ. դրամի փոխարեն փաստացի մուտքերը կազմել են 1120.5 հազ. դրամ, կատարմա տոկոսը՝142. %: Պաշտոնական տրանսֆերտների գծով եկամուտները (ՀՀ պետական բյուջեից տրամադրվող դոտացիաներ) նախատեսված 7903.5 հազ. դրամը տրվել են 7545.6 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 95.5 %, այդ թվում՝ համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները՝ 7545.6 հազ. դրամ,որը տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝100,0%,իսկ այլ դոտացիաները նախատեսված էր 357.5 հազ. դրամ,որը սակայն չի տրամադրվել:

1. Վարչական մասի եկամուտները

2015թ-ի բյուջեն վարչական մասով առաջին եռամսյակի ընթացքում նախատեսված էր 8690.0 հազ. դրամ եկամուտ, փաստացի մուտքերը կազմել են 8666.1 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 99.7 % : Սեփական եկամուտները (հարկային եկամուտներ և տուրքեր, ոչ հարկային եկամուտներ) նախատեսված էր 786.5 հազ. դրամ, փաստացի մուտքը կազմել է 1120.5 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 142.5 %: Պաշտոնական տրանսֆերտների գծով եկամուտները (ՀՀ պետական բյուջեից տրամադրվող դոտացիա) նախատեսված 7903.5 հազ. դրամի փոխարեն տրվելեն 7545.6 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 95.5 %, այդ թվում՝ համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները՝ 7545.6 հազ. դրամ,որը տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝100,0%,իսկ այլ դոտացիաները նախատեսված էր 357.5 հազ. դրամ,որը սակայն չի տրամադրվել:

1) Հողի հարկ

Հողի հարկի գծով եկամուտները 2015 թ-ի բյուջեի առաջին եռամսյակի ընթացքում նախատեսված էր 150.0 հազ. դրամ, փաստացի մուտքերը կազմել են 259.1 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 172.7%: Նախորդ տարվա համեմատ հողի հարկի կատարման տոկոսը աճել է:

2) Գույքահարկ

Գույքահարկը համայնքի վարչական տարածքում գտնվող շենքերի և շինությունների համար նախատեսված էր 50.0 հազ. դրամ, փաստացի մուտքը կազմել է 67,0 հազ. դրամ կամ կատարման տոկոսը 134.0 %, իսկ փոխադրամիջոցների համար նախատեսված էր գույքահարկ 346.5 հազ. դրամ, փաստացի մուտքերը կազմել են 548.3 հազ. դրամ, կամ կատարման տոկոսը՝ 158.2%, որը նախորդ տարվա համեմատ նույնպես աճել է :

3) Տեղական տուրքեր

Տեղական տուրքերի գծով եկամուտները առաջին եռամսյակի ընթացքում նախատեսված էր 205,0 հազ. դրամ, փաստացի մուտքը կազմել է 216.6 հազ.դրամ կամ կատարման տոկոսը՝105.7 %, որը նախորդ տարվա համեմատ նույնպես աճել է :

4) Այլ եկամուտներ

Այս եկամտատեսակը 2015թ-ի բյուջեի առաջին եռամսյակի ընթացքում նախատեսված էր 35,0 հազ. դրամ, փաստացի մուտքը կազմել է 29.5 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 84.3 % :

5) Պաշտոնական ընթացիկ տրանսֆերտներ

Պաշտոնական տրանսֆերտների գծով եկամուտները (ՀՀ պետական բյուջեից տրամադրվող դոտացիա) նախատեսված 7903.5 հազ. դրամի փոխարեն տրվել են 7545.6 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 95.5 %, այդ թվում՝ համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները՝ 7545.6 հազ. դրամ,որը տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝100,0%,իսկ այլ դոտացիաները նախատեսված էր 357.5 հազ. դրամ,որը սակայն այն չի տրամադրվել:

2. Բյուջեի վարչական մասի ծախսերի կատարողականը

Բյուջեի վարչական մասի 2015թ.-ի բյուջեի ծախսերը առաջին եռամսյակի ընթացքում նախատեսված էր 8690.0 հազ. դրամ ծախս, փաստացի ծախսվել է 7785.1 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 89,6%:

1) Ըստ գործառնական դասակարգման ծախսերը կատարվել են

ա) Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերը 2015 թ-ի առաջին եռամսյակի ընթացքում նախատեսված 4683.0 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 4180.1 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 89.3 %:

բ) Շրջակա միջավայրի պաշտպանության գծով ծախսերը նախատեսված էր 1000,0 հազ. դրամ, փաստացի ծախս կատարվել է 850,0 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 85.0 % :

գ) Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայության՝ այդ թվում փողոցների լուսավորության համար ծախսերը նախատեսված 220,0 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսվել է 220.0 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 100.0 %:

դ) Կրթության համար նախատեսված ծախսերը 2537,0 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսվել է 2535,0 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 99.1 %,այդ թվում նախադպրոցական կրթության համար նախատեսված 1372,0 հազ.դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 1370,0 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 99.9 %, արտադպրոցական դաստիարակության համար նախատեսված 1000,0 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսը կատարվել է 1000,0 հազ.դրամ, կատարման տոկոսը՝100,0 %, կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների համար նախատեսված 165,0 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսը կատարվել է 165,0 հազ. կատարման տոկոսը՝100,0 %,

ե) Սոցիալական պաշտպանության գծով ծախսերը առաջին եռամսյակի ընթացքում նախատեսված 165,0 հազ. դրամի դիմաց փաստացի ծախս չի կատարվել:

2) Ըստ տնտեսագիտական դասակարգման 2015 թ.-ի առաջին եռամսյակի ընթացքում նախատեսված ծախսերը կատարվել են.

ա) Աշխատանքի վարձատրության համար նախատեսված 3700.0 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսը կատարվել է 3671.9 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 99.2 %,

բ) Ծառայությունների և ապրանքների ձեռք բերման ծախսերը նախատեսված 1358.0 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսը կատարվել է 893.2 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 65.8 %:

գ) Ընթացիկ դրամաշնորհները համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների համար նախատեսված էր 3372.0 հազ. դրամ, փաստացի կատարվել է 3220.0 հազ. դրամ ծախս կամ կատարման տոկոսը՝ 95.5 %:

դ) Սոցիալական պաշտպանության գծով ծախսերը առաջին եռամսյակի ընթացքում նախատեսված 150,0 հազ. դրամի դիմաց փաստացի ծախս չի կատարվել:

ե) Այլ ծախսերը նախատեսված էր 110.0 հազ. դրամի դիմաց փաստացի ծախս չի կատարվել :

3. Բյուջեի ֆոնդային մասի ծախսերը

Թումանյան համայնքի 2015 թ.-ի առաջին եռամսյակի ընթացքում բյուջեի ֆոնդային մասի ծախսերը նախատեսված էր՝530.6 հազ. դրամ,սակայն փաստացի ծախս չի կատարվել:

1) Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը, որից ճանապարհային տրանսպորտ (կապիտալ նրոգում) նախատեսված էր 530.6 հազ. դրամ,սակայն փաստացի ծախս չի կատարվել:

4.Համայնքի բյուջեի հավելուրդը կամ պակասուրդը (դեֆիցիտը)

Համայնքի բյուջեի վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը կազմել է 492.589 հազ. դրամ,որը ուղղված է բյուջեի ֆոնդային մասին,իսկ ֆոնդային մասի տարեսկզբի ազատ մնացորդը կազմում է 38.012 հազ. դրամ:

Թումանյան համայնքի 2015 թ.-ի առաջին եռամսյակի բյուջեի կատարման բարձր ցուցանիշները պայմանավորված է համայնքի ղեկավարի և աշխատակազմի բարեխիղճ և հետևողական աշխատանքով:

Թումանյան համայնքի ղեկավար՝ /Լ. Զավարյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
29 ԱՊՐԻԼԻ 2015թվականի N 12-Ա

ՀՄՊ ՎԵՏԵՐԱՆԻՆ ԵՎ ՇՈՒՇԻԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԶՈՀՎԱԾ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Թումանյանի քաղաքային համայնքի ավագանու 2014թ.դեկտեմբերի 11-ի<<Թումանյան համայնքի 2015թ. բյուջեն հաստատելու մասին >> թիվ 57-Ն որոշումը ,Թումանյանի քաղաքային համայնքի ավագանու 2014թ.նոյեմբերի 28-ի <<Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Թումանյան համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգ>>-ի թիվ 54-Ա որոշման համաձայն Թումանյան համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ՀՄՊ վետերան Մարտիրոս Թորոսյանին և Շուշիի ազատագրման համար զոհված ազատամարտիկների ընտանիքներին՝ Սոնյա Ստեփանյանին, Հովսեփ Խարազյանին,Ռայա Աղաջանյանին,Արմենակ Զաքարյանին և Ալվարդ Ջանինյանին դրամական օգնություն տրամադրելու մասին.

1.Թումանյանի քաղաքապետարանի՝ սոցիալական օգնություն խմբի այլ նպաստներ բյուջեից /հոդված 4729 / Թումանյան քաղաքի ՀՄՊ վետերանին և Շուշիի ազատագրման համար զոհված ազատամարտիկների ընտանիքներին տրամադրել դրամական օգնություն .

1) Թորոսյան Մարտիրոս Վարդանի - 30000 դրամ

2) Ստեփանյան Սոնյա Մուկուչի - 20000 դրամ

3) Խարազյան Հովսեփ Բորիսի - 20000 դրամ

4) Աղաջանյան Ռայա Լյուդվիկի - 20000 դրամ

5) Զաքարյան Արմենակ Հայկազի - 20000 դրամ

6) Ջանինյան Ալվարդ Հրաչիկի - 20000 դրամ

2.Թումանյանի քաղաքապետարանի գանձապահ Հերմինե Հովսեփյանին լիազորել՝ Ալավերդու բանկից ստանալու հատկացված դրամական օգնությունը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՆԵՐՍԵՍ
2. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ
3. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐԱՏ
4. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐՏՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
29 ԱՊՐԻԼԻ 2015թվականի N 13-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Թումանյանի քաղաքային համայնքի ավագանու 2014թ. դեկտեմբերի 11-ի <<Թումանյան համայնքի 2015թ. բյուջեն հաստատելու մասին >> թիվ 57-Ն որոշումը,Թումանյանի քաղաքապետի կարգադրության 2015թ.հունվարի 12-ի<<Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Թումանյան համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողով>>-ի եզրակացությունը և Թումանյան քաղաքի բնակիչներ՝ Աշոտ Ժորայի Ալիխանյանի, Աշխեն Արսենի Ասրյանի , Սարգիս Աշոտի Մխիթարանի, Մհեր Մովսեսի Մովսիսյանի,Գնել Ռաֆայելի Սարգսյանի և Վարդան Սամվելի Եղինյանի դիմումները.

1.Թումանյանի քաղաքապետարանի սոցիալական օգնություն խմբի այլ նպաստներ բյուջեից /հոդված 4729/ Թումանյան քաղաքի ստորև բերված սոցիալապես անապահով քաղաքացիներին տրամադրել դրամական օգնություն .

1) Աշոտ Ժորայի Ալիխանյան- 200000 դրամ

2) Աշխեն Արսենի Ասրյան - 30000 դրամ

3) Սարգիս Աշոտի Մխիթարան -30000 դրամ

4) Մհեր Մովսեսի Մովսիսյան - 20000 դրամ

5)Գնել Ռաֆայելի Սարգսյան - 30000 դրամ

6)Վարդան Սամվելի Եղինյան - 30000 դրամ

2.Թումանյանի քաղաքապետարանի գանձապահ Հերմինե Հովսեփյանին լիազորել՝ Ալավերդու բանկից ստանալու հատկացված դրամական օգնությունը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՆԵՐՍԵՍ
2. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ
3. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐԱՏ
4. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐՏՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ՋԱՎԱՐՅԱՆ